Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-546[1]-31.03.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հրդեհային անվտանգության մասին» 2001 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-176 օրենքի 20-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8. Տեսչական մարմնի տված կարգադրագրերի, եզրակացությունների և կայացվող որոշումների՝ դրանցով սահմանված ժամկետում չկատարման դեպքում այն ստուգվող սուբյեկտի կողմից, որի սնանկ ճանաչվելու մասին վճիռն օրինական ուժի մեջ է մտել կամ սկսվել է լուծարման գործընթաց և միաժամանակ՝ տրված կարգադրագրերի, եզրակացությունների և կայացվող որոշումների չկատարման արդյունքում առկա է քաղաքացիների կյանքին, առողջությանը սպառնացող անմիջական վտանգ, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակի առաջացման վտանգ՝ Տեսչական մարմինը՝ կարգադրագրերի, եզրակացությունների և կայացվող որոշումների՝ չկատարման փաստը արձանագրելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմում է լիազորված մարմին՝ վերջինիս ներկայացնելով առաջարկություն Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական գործողությունների արդյունքում արձանագրված և սահմանված ժամկետում չվերացված խախտումները վերացնելու վերաբերյալ:

9. Լիազորված մարմինը սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված առաջարկությունը ստանալու պահից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Տեսչական մարմնին ներկայացնում է տեղեկություն՝ Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական գործողությունների արդյունքում արձանագրված և սահմանված ժամկետում չվերացված խախտումները իր կողմից վերացնելու նպատակով համապատասխան գործողությունների, դրանց կատարման համար անհրաժեշտ ժամկետների, ինչպես նաև դրանց կատարման նախնական ծախսերի հաշվարկի վերաբերյալ:

10. Լիազորված մարմինը սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ գործողությունների կատարման ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում Տեսչական մարմնին ներկայացնում է տեղեկություն՝ կատարված գործողությունների արդյունքների վերաբերյալ, իսկ ստուգվող սուբյեկտին ներկայացնում է արձանագրված խախտումների վերացման արդյունքում կատարված ֆինանսական ծախսերի փոխհատուցման պահանջ:

11. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ փոխհատուցման պահանջը ստուգվող սուբյեկտի կողմից այն ստանալու պահից մեկամսյա ժամկետում չկատարվելու դեպքում գանձումն իրականացվում է դատական կարգով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հրդեհային անվտանգության մասին» 2001 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-176 օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք) լրացնել~~ 20-րդ հոդվածը լրացնել նոր 8-րդ, 9-րդ, 10-րդ եւ 11-րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«8. Տեսչական մարմնի տված կարգադրագրերի, եզրակացությունների եւ կայացվող որոշումների՝ դրանցով սահմանված ժամկետում չկատարման դեպքում այն ստուգվող սուբյեկտի կողմից, որի սնանկ ճանաչվելու մասին վճիռն օրինական ուժի մեջ է մտել կամ սկսվել է լուծարման գործընթաց եւ միաժամանակ՝ տրված կարգադրագրերի, եզրակացությունների եւ կայացվող որոշումների չկատարման արդյունքում առկա է քաղաքացիների կյանքին, առողջությանը սպառնացող անմիջական վտանգ, ինչպես նաեւ բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակի առաջացման վտանգ՝ Տեսչական մարմինը՝ կարգադրագրերի, եզրակացությունների եւ կայացվող որոշումների՝ չկատարման փաստը արձանագրելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմում է լիազորված մարմին՝ վերջինիս ներկայացնելով առաջարկություն Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական գործողությունների արդյունքում արձանագրված եւ սահմանված ժամկետում չվերացված խախտումները վերացնելու վերաբերյալ:

9. Լիազորված մարմինը սույն հոդվածի 8-րդ մասով սահմանված առաջարկությունը ստանալու պահից՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Տեսչական մարմնին ներկայացնում է տեղեկություն՝ Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողական գործողությունների արդյունքում արձանագրված եւ սահմանված ժամկետում չվերացված խախտումները իր կողմից վերացնելու նպատակով համապատասխան գործողությունների, դրանց կատարման համար անհրաժեշտ ժամկետների, ինչպես նաեւ դրանց կատարման նախնական ծախսերի հաշվարկի վերաբերյալ:

10. Լիազորված մարմինը սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված՝ գործողությունների կատարման ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում Տեսչական մարմնին ներկայացնում է տեղեկություն՝ կատարված գործողությունների արդյունքների վերաբերյալ, իսկ ստուգվող սուբյեկտին ներկայացնում է արձանագրված խախտումների վերացման արդյունքում կատարված ֆինանսական ծախսերի փոխհատուցման պահանջ:

11. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ փոխհատուցման պահանջը ստուգվող սուբյեկտի կողմից այն ստանալու պահից մեկամսյա ժամկետում չկատարվելու դեպքում գանձումն իրականացվում է դատական կարգով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-546-31.03.2023-ՊԻ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
«Հրդեհային անվտանգության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենք) լրացնել» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում Օրենքին հղում այլևս չի կատարվում, ինչպես նաև նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրենքի 20-րդ հոդվածում լրացվող 11-րդ մասում «կողմից» բառից հետո լրացնել «այն ստանալու պահից» բառերը՝ իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ					
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծում օրենքին հղում այլևս չի կատարվում, ինչպես նաև 1-ին հոդվածում և 1-ին հոդվածով լրացվող 8.2-րդ մասում նշված «8.1.-րդ» ձևակերպումը փոխարինել «8.1-ին» ձևակերպմամբ՝ դասական թվականների ճիշտ գրելաձևն ապահովելու նպատակով, իսկ նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող Օրեքի 15-րդ հոդվածում լրացվող 8.4-րդ մասում «կողմից» բառից հետո լրացնել «այն ստանալու պահից» բառերը՝ իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է